

թագաւորութեանն եւ հետեւիլ հայրենականացն. եւ ոչ այսչափ միայն, այլ եւ տիրաբար իմն ձեռներեց լինելով՝ փոփոխել զպաշտօնեայս եւ զիշխանս, եւ ըստ կամի ամբառնալ զանաւագս եւ զանբնիկս. եւ խրատեալ բազում անգամ եւ անխող լեալ, (քանզի ունէր թելադիրս եւ սաղրողս՝ Լատինաց անտի որ յերկրին Հայոց, եւ որպէս թուի նաեւ յուխտէ եկեղեցւոյ նոցին). իբրեւ յաւել 'ի վերայ այսոցիկ՝ տանել յԱնտիոք եւ յարքունի գանձուց Հայոց, ոչ միայն մերժեցաւ՝ իպատուոյն՝ զոր ոչ գիտաց յարգել, այլ եւ՝ ի կենակցութենէ դշխոյին դստեր Լեւոնի, յորոյ եւ՝ իգրկաց իսկ կորգեցաւ զիշերայն, եւ արկաւ՝ իբանտ՝ իԹիլն Համտընոյ, մինչեւ յետս դարձուցէ յԱնտիոքէ զարքունական սպասսն, զոր հայր նորա ապառուս ժխտեաց, ասեն, անողորմ գտեալ առ որդին տառապեալ. որ ոչ այնքան զնդանին՝ որքան՝ իսրտին անձկութենէ հարեալ՝ զրաւեցաւ եւ ինքն զայսօրինակ տրտմութեամբ, վատաբախտիկ եւ վաղամեռիկ²⁴⁰: Գլուխ արժանակիր խնդրէր մեծ եւ ծանր թագն Լեւոնի:

Երկրորդ անգամ կարգեցաւ Կոստանդին՝ իՊայլ (1223), ոչ արքայ օրիորդին միայնոյ, այլ եւ համօրէն թագաւորութեանն, եւ յանձանձեաց երիս եւս ամս.՝ իբաց վարեաց զկուսակիցս եւ զսաղորիչս Փիլիպպոսի, ընդ որս եւ զեպիսկոպոսունս Լատինաց. որպէս է գուշակել՝ ի թղթոց Քահանայապետին Ոնորիոսի առ Կոստանդին կաթողիկոս, խնդրելով զի դարձուցէ զհեռացեալ արքեպիսկոպոսունս Տարսոնի եւ Մամեստիոյ. որ եւ ապա՝ իլինել հաւանութեանն՝ գրէր առ պատրիարքն Երուսաղեմի (17 դեկտ. 1223), վերահաստատել զնոսին յաթոռս իւրեանց: Նուաճեալ ընդ իւրեւ զբազումս յօժարութեամբ, եւ զայլս՝ ահարկութեամբ՝ զՊարոնայսն, (զորս ոմանք թուով վաթսուն եւ երկու ասեն, այլք եօթանասուն), Պայլն Կոստանդին, խորհրդակցութեամբ կաթողիկոսին՝ առաջի արար զընտրութիւն նորոյ թագաւորի եւ փեսայի Զապելի, որ արդ իբր իննամեայ էր: Այլ յայսմ նուագի թուէր իմն, ըստ առակաւոր առիւծուն՝ խնդրել բաժին. միաբանեցան Պարոնայքն եւ Եպիսկոպոսունք՝ զկրսերագոյնն կամ զմերձագոյնն կրսերոյն յորդոց նորին իսկ Կոստանդինի, զմմանեակն Դաւթի կայտառ եւ զեղաղէշ եւ զանձնեայ պատանեակ մետասան ամաց՝ զՀէթում, կարգել իւրեանց թագաւոր. եւ հրաւեր կարդացեալ հեռաւորաց

²⁴⁰ Տարեգիր Ս. Երկրին համառօնէ. «Phelippes, fix de Buemont, prince d'Antioche, espousa la fille dou roy Lyvon d'Ermenie, et ot tout le royaume d'Ermenie; dont le Bail d'Ermenie le prist puis, et le mist en prison, dont il morut»: